# ՔՈ ՀԱՎԱ՛ՏԸ ՔԵԶ ՓՐԿԵՑ, ԳՆԱ՛ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ

(ՄԱՐ. 14:3-9)

---

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

(Մար. 14:3-9 / Հովհ.12:1-8)

Իսկ Հիսուս զատկից վեց օր առաջ եկավ Բեթանիա, ուր ապրում էր մեռած Ղազարոսը, որին մեռելներից հարութիւն տուավ: 3 Եւ մինչ նա Բեթանիայում էր, բորոտ Սիմոնի տանը սեղան նստած, քաղաքում **մի մեղավոր կին կար.** երբ նա իմացավ, որ փարիսեցու տանը սեղան է նստել, մի շիշ ազնիվ մեծարժէք յուղ բերեց. եւ շիշը կոտրելով՝ յուղը թափեց Յիսուսի գլխին: Կանգնեց Յիսուսի ետեվը, **նրա ոտքերի մօտ.** եւ **լաց էր լինում** ու սկսեց արտասուքներով թրջել նրա ոտքերը եւ իր գլխի մազերով սրբում էր. համբուրում էր նրա ոտքերը եւ այդ յուղով օծում: Բայց կային ոմանք Աշակերտներից որ զայրացան եւ ասացին. «Այդ յուղը ինչո՞ւ այսպէս պիտի կորչէր. կարելի էր այդ անուշահոտ յուղը վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի եւ տալ աղքատներին»: Եւ շատ հանդիմանում էին այն կնկան: Եւ Յիսուս նրանց ասաց. «Թո՛յլ տուէք դրան. ինչո՞ւ էք նեղութիւն տալիս, որովհետեւ նա ինձ համար մի բարի գործ արեց: Ամէն ժամ աղքատներին ձեզ հետ ունէք եւ երբ ուզենաք, կարող էք նրանց բարիք անել: Բայց ինձ ամէն ժամ ձեզ հետ չունէք: Դա, ինչ որ կարող էր, արեց. Առաջուց իմ մարմինն օծեց՝ թաղման համար: **Ճշմարիտ եմ ասում ձեզ, ուր էլ քարոզուի այս Աւետարանը ամբողջ աշխարհում, ինչ որ նա արեց, այդ եւս պիտի պատմուի նրա յիշատակի համար»:**

10 Եւ Յուդա Իսկարիովտացին՝ Տասներկուսից մէկը, գնաց քահանայապետների մօտ, որ Հիսուսին մատնի նրանց:

**Ղուկաս 7:48 -** Եւ ասաց այն կնոջը. **«Քո մեղքերը քեզ ներուած են»:** 49 Եւ նրանք, որ նրա հետ սեղան էին նստել, սկսեցին ասել իրենց մտքում. «Ո՞վ է սա, որ մեղքերին թողութիւն է տալիս»: 50 Եւ նա ասաց այդ կնոջը. **«Քո հավա՛տը քեզ փրկեց, գնա՛ խաղաղութեամբ»:**

## I. Ի՞ՆՉ Է ԳՐՎԱԾ ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ ՄԱՐԻԱՄԻ ՄԱՍԻՆ և ԻՆՉ ՉԻ ԳՐՎԱԾ:

3 ***քաղաքում մի մեղավոր կին կար.***

**Հռ. 3:23-24 -** 23 որովհետեւ բոլորն էլ մեղք գործեցին եւ զրկուեցին Աստծու փառքից, 24 բայց նրա շնորհիվ ձրի արդարացան Քրիստոս Հիսուսի միջոցով եղած փրկությամբ:

**Նրա մասին նշված է տասնչորս անգամ Ավետարաններում:**
**8 անգամ – այլ կանանց հետ տարբեր համարներում.**

**2 անգամ – Հով. 19:25 - 25** Եւ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նորա մայրը, եւ նորա մօր քոյրը՝ Մարիամը, եւ Մարիամ Մագդաղենացին:

**5 անգամ – նշված է առանձին, Քրիստոսի մահվան և հարության հետ կապակցված:**

1. **Մարիամը տեսավ թէ ինչպես Հիսուսը մեծ ձայնով արձակեց՝ հոգին:**

   **Մար. 15:40-41 -** 40 Կային եւ կանայք, որոնք դիտում էին հեռուից: Նրանց մէջ էին **Մարիամ Մագդաղենացին,** Կրտսեր Յակոբոսի եւ Յովսէի մայրը՝ Մարիամը, ինչպէս եւ Սաղոմէն, 41 որոնք, երբ Յիսուս Գալիլիայում էր, նրա հետեւից էին գնում եւ ծառայում նրան.

2. **Մարիամը տեսավ այն տեղը, ուր Հիսուսի մարմինը դրվեց:**

   **Մար. 15:47 -** 47 Իսկ Մարիամ Մագդաղենացին եւ Յակոբոսի ու Յովսէի մայր Մարիամը տեսան այն տեղը, ուր նա դրուեց:

3. **Մարիամը տեսավ թէ ինչպես գերեզմաի քարը գլորվեց: Մատթ. 28:1-2**

   **Մատթ. 28:1-2** 1 Շաբաթ օրուա երեկոյան, երբ կիրակին լուսանում էր, Մարիամ Մագդաղենացին եւ միւս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: 2 Եւ ահա մեծ երկրաշարժ եղաւ...

4. **Մարիամը առաջինն էր որ ականատես եղավ Հիսուսին մեռելներից հարություն առած:**

   **Մար. 16:9-11 -** 9 Կիրակի առավօտեան հարություն առած լինելով՝ Յիսուս նախ երեւաց **Մարիամ Մագդաղենացուն,** որից եօթը դեւ էր հանել:

   ***Հով. 20:11-16* – *... աշակերտները գնացին տուն...*** *Բայց* ***Մարիամը*** *կանգնած էր գերեզմանի դուրսը ու լաց էր լինում. եւ մինչ դեռ լաց էր լինում, կռացավ դէպի գերեզմանը* 12 *եւ տեսավ երկու հրեշտակներ՝ սպիտակների մէջ, որոնք նստել էին՝ մէկը՝ սնարին, եւ միւսը՝ ոտքերի մօտ, այնտեղ, ուր Հիսուսի մարմինն էր եղել:* 13 *Եւ նրան ասացին. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս»: Նա նրանց ասաց. «Որովհետեւ* ***ԻՄ ՏԻՐՈՋԸ*** *գերեզմանից վերցրել են, եւ չգիտեմ՝ նրան ուր են դրել»:* 14 *Երբ այս ասաց, դէպի հետեւի կողմը դարձավ եւ տեսավ Յիսուսին, որ կանգնած էր. բայց չէր իմանում, թէ Յիսուսն է:* 15 *Յիսուս նրան ասաց. «Ո՛վ կին, ինչո՞ւ ես լալիս, ո՞ւմ ես փնտռում»: Նրան այնպէս թուաց, թէ պարտիզպանն է. եւ ասաց նրան. «****Տէ՛ր,*** *եթէ դու ես նրան վերցրել, ասա՛ ինձ՝ ուր ես դրել նրան, որպէսզի ես նրան վերցնեմ»:* 16 ***Հիսուս նրան ասաց՝ Մարիամ:*** *Եւ նա դարձաւ ու եբրայերէն նրան ասաց՝* ***Ռաբբունի՛ (որ թարգմանւում է՝ վարդապետ):***

5. **Մարիամը աշակերտներին վկայեց Հիսուի մասին:**

   **Մար. 16:9-11 -** 10 Եւ սա գնաց ու պատմեց նրանց, որ Յիսուսի հետ էին եւ դեռեւս սգում ու լաց էին լինում: 11 Երբ նրանք լսեցին, թէ նա կենդանի է եւ երեւացել է **Մարիամին**, **չհաւատացին:**

**Երկու կարեւոր դասեր մենք կարող ենք սովորել Մարիամ Մագդաղենացին:**

## II. ՃՇՄԱՐԻՏ ԵՄ ԱՍՈՒՄ ՁԵԶ, ՈՒՐ ԷԼ ՔԱՐՈԶՈՒԻ ԱՅՍ ԱՎԵՏԱՐԱՆԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ, ԻՆՉ ՈՐ ՆԱ ԱՐԵՑ, ԱՅԴ ԵՒՍ ՊԻՏԻ ՊԱՏՄՈՒԻ ՆՐԱ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ»:

*John Bunyan has the same number at the end of his Grace Abounding – I find to this day these seven abominations in my heart.*

***Առակ. 6:16-19 -*** *16 Վեց բան կա որ տէրն ատում է, եւ եօթը՝ զզուելի են նորա հոգու*
*առաջին. 17 Ամբարտավան աչքեր, ստախոս լեզու, եւ անմեղ արյուն թափող ձեռքեր. 18*
*Չար խորհուրդներ հնարող սիրտ, չարության համար վազելու շտապող ոտքեր. 19 Սուտեր*
*բորբոքոխ անիրավ վկա, եւ եղբայրների մէջ կռիվներ գցող:*

## III. ՔՈ ՀԱՎԱ՛ՏԸ ՔԵԶ ՓՐԿԵՑ, ԳՆԱ՛ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ:
## THE WORD LEADS TO OBEDIENCE.

**Հռ. 7:18-25 -** 18 Որովհետեւ գիտեմ որ ինձանում (այսինքն իմ մարմնի մեջ) մի բարի
բան չի բնակվում. որովհետեւ կամենալը կա իմ մէջ, իսկ բարին գործելը՝ չեմ գտնում:
19 որովհետեւ ոչ թէ անում եմ բարին, որ կամենում եմ, այլ գործում եմ չարը, որը չեմ
կամենում: 20 Իսկ եթէ անում եմ այն, ինչ որ չեմ կամենում, այլեւ ես չէ, որ անում եմ
այն, այլ՝ իմ մէջ բնակուող մեղքը: 21 Ուրեմն գտնում եմ այդ օրէնքը՝ երբ ես ուզում եմ
բարին գործել, իմ դէմ չարն է ելնում: 22 Որովհետեւ ես հաւանում եմ Աստուծո
օրէնքին՝ ներսի մարդով: 23 բայց իմ մարմնի անդամների մէջ տեսնում եմ այլ
օրէնք, որ պայքարում է իմ մտքի օրէնքին հակառակ եւ ինձ գերի է դարձրել մեղքի
օրէնքին, որ կայ իմ մարմնի անդամների մէջ: 24 **Ի՜նչ խղճալի մարդ եմ ես: Ո՞վ կը
փրկի ինձ այս մարմնից, որ ինձ մահուան է տանում:** 25 Շնորհակալ եմ
Աստուածանից **մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով:** Ապա ուրեմն ես ինքս իմ
մտքով ծառայում եմ Աստծու օրէնքին, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին:

## ԱՄՓՈՓՈՒՄ

**HAS HE EXPELLED SATAN FROM OUR LIVES? IF SO, ARE WE LOVING AND SERVING HIM TO THE LIMIT OF OUR CAPACITY, DAILY WITNESSING TO THE POWER OF HIS RESURRECTION?**